

2017 թվականի նոյեմբերի 20-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը շրջայց կատարեց Սամցխե-Ջավախքի և Ծալկայի փոխառաջնորդություններում: Թեմակալ առաջնորդին ընկերակցում էին Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Արտակ Գրաբսկին, թեմի ֆինանսական բաժնի տնօրեն Մարգարիտա Կիրակոսյանը և վարչա-տնտեսական բաժնի տնօրեն Կարեն Երիցյանը:

Վազգեն Սրբազանի առաջին կանգառը Ծալկայի շրջանի Նարդևան գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցին էր: Թեմակալ առաջնորդը տեղի



հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Ղևոնդ քահանա Թոփաշյանի ուղեկցությամբ այցելեց եկեղեցի, ուսումնասիրեց եկեղեցու ընդհանուր վիճակը, ունկնդրեց հոգևոր հովվի կատարած աշխատանքի մասին տեղեկատվությունը և Տեր հոր հետ միասին Սուրբ խորանի առջև կատարեց միասնական աղոթք:

Վիրահայոց թեմի առաջնորդը այց կատարեց նաև Նինոծմինդայի Ռաֆայել – Ջավախ կրթամշակութային և երիտասարդության կենտրոն,, որտեղ շրջանի հոգևոր հովվիվ արժանապատիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանը ներկայացրեց հովվությունում և կենտրոնում տարվող աշատանքները:











